



87. ԹԸԽՊԻ ՆԱՂԸԼԸ

Թուխպը պարի սըրտով մին պառավ նանի էր, շատ թոռ ու ծոռներ ուներ, շատ էլ սիրում էր իւրան էտ ղանչանգ թոռ ու ծոռներին՝ ծաղիկներին ու խոտերին: Թան որ բոլորդան ընդանց մին փորցանք էր ռանստ կանխ, էն սըհաթին առնում էր իւրան փեշկերի տակը, ծասկըմ չար աշկերից:

Ջուռա-ջուռա ծաղիկնին ու զըմբրուխտ խոտերը մին խորթ մեր ունին՝ անըմը Քամի՝ մին կաղարյալ խելագար: Դե ո՞ր հարսն ա իւրան սկեսուրի նհետ մարթավարի յոլա քինըմ, որ էն էլ Թըխպի հետ յոլա քինար: Հենց սկեսուրին տենըմ էր իւրան թոռ ու ծոռների նհետ, վրան էր պրծնըմ, կլխիցը սփպտակ մագերը պոք տալիս, սև ըրխալըղը պատառ-պատառ անըմ, քըմ հուր որ պըտահի: Սկեսորը քցըմ էր սար ու ծոռ, եղո ետ տառնըմ հու տուր թան կըտաս խոխոցը:

Մախկի կլխիցը փոնըմ էր տալիս խոտի կլխովը, սիլան տալիս չտեղին ծեռքը հըսնըմ էր, թակըմ էր էնքամ, որ ուժը հատըմ էր, հերսը նըստըմ, հընդարդվըմ:

Հեխճ նանին հեովիցը տենըմ էր իւրան թոռանցը դժբախտութունը հու հանդարտ լաց էր ինըմ, համա քանինչ խելառ մերը ընդրանց կըշտին էր ինըմ, ոխակ չէր անըմ, կարըմ չէր մոտիկանալ:

Ընդրանց տեսութունին կանխ էր էն վախտը, եփ խորթ մերը իրերըմ չէր: Կանխ էր, խտըտըմ չիմմին, պըչպըչորըմ հու արտասունք թափըմ:

Արտասունքը կաթ-կաթ ընգնըմ էր թոռնիկների կլխին հու չոբերին փըսպըղըմ ջուհարների մնան:

Նանիւ դարդը ասես թան քիչ էր, հըրեան Արեն էլ մին ղոլիցն էր ծիծաղըմ պառավի վրեն: Թոռները հենց որ մինակ ին մնըմ, իւրան կաս-կարմիր ղամփուրներովը ղամփորըմ էր ընդդրանց, խանձըմ:

Ըտրանից էր որ Թուխպը խոժոռվավ, տաննավ մորխկած:

Աջըղվեց ախշարքի անարթարութունի հու հըրեանի չարութունի վրեն:

Ըտրա մհար էլ թոռների կուշտը կալիս սիֆտիցը ուրա սև
չանդրովը ծասկըմ էր Արևի իրեսը, որ ուրա դանդը տենա ոչ, ուրա
բալոցը շամփրի ոչ, կծի ոչ, ըտրանա եզը չիմմին առնըմ էր ուրա
խտիտը, սիրըմ, պըչպըչորըմ, արտասունքով թըռչըմ, որ ընդրանք
գյանքի խորչակներիցը խանձվեն ոչ:

Պարի սիրտ ունի թուխպ նանին: Ուրա նհետ գյանք ու պատիժ
ա պերըմ, պալց որ տեսնողնին ծիծանդեն ոչ ուրա մեծ թիվիթիլնի՝
պարիութունի վրեն, համանչա նոթերը կոտորմ ա, մորխկըմ:

